

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Կ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 70-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԻՆ ՆԿԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ

***Հարգարժան պարոն Մարգարե
Հարգելի՛ գործընկերներ***

Մարզում արդեն իսկ մեկնարկում են Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյա հորեյանին նվիրված միջոցառումները, որոնց նախապատրաստական աշխատանքները պատշաճ կերպով իրականացնելու, ինչպես նաև նախատեսվող բոլոր հանդիսություններն արդյունավետ ու համակողմանի կազմակերպելու նպատակով ՀՀ Կոտայքի մարզպետի համապատասխան կարգադրությամբ ձևավորվել է հորեյանական հանձնաժողով, ինչպես նաև հաստատվել է մարզային միջոցառումների ծրագիրը:

Այս ամենին զուգահեռ փաստենք, որ նախատեսվող բոլոր միջոցառումներում, Մեծ հաղթանակի 70-ամյա հորեյանին զուգահեռ, հանգամանորեն ներկայացվելու են նաև Շուշիի ազատագրման մարտական գործողությունների պատմական իրողությունները, Հայրենական Մեծ պատերազմի հարգարժան վետերանների ու նրանց ընտանիքների հետ միասին հավուր պատշաճի մեծարվելու են նաև Շուշիի ազատագրմանը մասնակցած՝ մեր քաջարի ազատամարտիկներն ու իրենց ընտանիքները:

Նշենք, որ ծավալուն միջոցառումներ են նախատեսվում մարզի բոլոր քաղաքային և գյուղական համայնքներում, կրթական, մշակութային ու մարզական հաստատություններում և կարելի է ասել, որ այս շրջանում մարզի առօրյան հագեցած է լինելու տոնական բազմաժանր նախաձեռնություններով և այդ ամենի ամփոփումը տեղի է ունենալու մայիսի 9-ին մարզկենտրոնում նախատեսվող հանդիսության շրջանակներում:

Հարկ եմ համարում ընդգծել, որ մարզային բոլոր միջոցառումների կազմակերպման հիմքում դրված են Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյա հորեյանի շրջանակներում նախատեսված պետական ծրագրերի դրույթներն ու սկզբունքները, ինչպես նաև հայ ժողովրդի փառապանծ հաղթանակների ողջ խորհուրդն ամբողջացնող պատմական դրվագներն ու ապագա հաղթանակներին միտված՝ մեր նորօրյա ուղերձները:

Այժմ ներկայացնենք Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյա հորեյանին նվիրված միջոցառումների մարզային ծրագրի ընդհանրական ուղղությունները.

Մարզի համայնքներում Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի առիթով տեղադրված հուշակոթողների և վերջիններիս հարող տարածքների բարեկարգում

Նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի առիթով կառուցված հուշակոթողների և վերջիններիս հարակից տարածքների մաքրման աշխատանքներ:

Այդ աշխատանքներում ներգրավվելու են մարզի քաղաքային և գյուղական համայնքների աշխատակազմերը, հանրակրթական դպրոցներն ու համայնքներում գործող տարբեր հաստատությունները:

Մարզի քաղաքային և գյուղական համայնքներում Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյա հորեյանին նվիրված միջոցառումների կազմակերպում

Մարզի բոլոր համայնքներում կազմակերպվելու են տոնական հանդիսություններ: Համայնքային ենթակայության մշակութային տարբեր օջախներում նախատեսվում են հորեյանական արարողություններ և Հայրենական Մեծ պատերազմի վետերանների մեծարման միջոցառումներ:

Մարզի հանրակրթական դպրոցներում Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի տոնի շրջանակներում միջոցառումների կազմակերպում

Մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում կազմակերպվելու են տոնական հանդիսություններ, լինելու են բաց դասեր, մշակութային ձեռնարկներ, հանդիպումներ Հայրենական Մեծ պատերազմի վետերանների հետ և այլն:

<<Մենք հաղթանակի սերունդներն ենք>> խորագրով դպրոցականների շարադրությունների հանրապետական մրցույթ

Մարզի դպրոցների աշակերտները մասնակցելու են ՀՀ կրթության և գիտության նախարարության հայտարարված շարադրությունների մրցույթին:

Լավագույն աշխատանքները ներկայացվելու են կազմակերպիչներին: :

<<Բաց դռների միամսյակ>> խորագրով առողջապահական բարեգործական ձեռնարկ Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցների համար

ՀՀ Կոտայքի մարզպետի նախաձեռնությամբ մարզի բոլոր առողջապահական ընկերություններում կազմակերպվելու է բարեգործական ձեռնարկ՝ նպատակ ունենալով պատշաճ կերպով կազմակերպել Հայրենական Մեծ պատերազմի վետերանների բուժզննումն ու սպասարկումը:

Հայրենական Մեծ պատերազմի մասնակից վետերաններին դրամական օգնության տրամադրում

ՀՀ Կոտայքի մարզպետի նախաձեռնությամբ մարզում բնակվող Հայրենական Մեծ պատերազմի բոլոր վետերաններին տրամադրվելու է դրամական օգնություն:

Հայրենական Մեծ պատերազմի հերոսների և հայտնի զորահրամանատարների նկարներով պաստառների տեղադրում քաղաքային համայնքներում

Քաղաքային համայնքներում՝ տեսանելի վայրերում գտնվող վահանակների վրա Հայրենական Մեծ պատերազմի հերոսների և հայտնի զորահրամանատարների նկարներով պաստառների տեղադրում: Կարգախոսը <<Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել>>:

Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակին նվիրված մարզային ամփոփիչ միջոցառում

Միջոցառումը նախատեսվում է կազմակերպել Հրազդան քաղաքում: Մարզպետարանի նիստերի դահլիճում կազմակերպվելիք հանդիսավոր նիստին հաջորդելու է տոնական համերգ մարզի լավագույն երգիչ-երգչուհիների և պարային համույթների մասնակցությամբ:

Երեկոյան հրավառություն Հրազդան քաղաքի Սահմանադրության հրապարակում: